



**ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ**

**ԶԻՆԱԻԴԱ ՎԱՆԻԻ ԲԱԼԱՅԱՆԻ  
«ԱՐՑԱԽԸ XIX ԴԱՐԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ» ԴՈԿՏՈՐԱԿԱՆ  
ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Վ. Պարտիզունու անվան հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 13.12.2021 թ. թիվ 4 նիստին մասնակցում էին ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.դ., պրոֆ. Սուրեն Դանիելյանը, բ.գ.դ., պրոֆ. Մարտին Գիլավյանը, բ.գ.թ., դոցենտներ Քնարիկ Աբրահամյանը, Լուսինե Գալստյանը, Նաիրա Խաչատրյանը, Արմենուհի Մուրադյանը, մ.գ.թ., դոցենտ Նաիրա Տողանյանը:

ԼՍԵՑԻՆ՝ Զինաիդա Վանիի Բալայանի «Արցախը XIX դարի հայ գրականության մեջ» թեմայով դոկտորական ատենախոսությունը ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի գրականագիտության գծով 003 մասնագիտական խորհրդում պաշտպանության երաշխավորելու հարցը՝ Ժ.01.01 «Հայ դասական գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ. Ս. Դանիելյանը, բ.գ.դ., պրոֆ. Մ. Գիլավյանը, բ.գ.թ., դոցենտներ Ք. Աբրահամյանը, Լ. Գալստյանը, Ն. Խաչատրյանը, Ա. Մուրադյանը, մ.գ.թ., դոցենտ Ն. Տողանյանը:

Նախ, նկատենք, որ կատարված է բարեխիղճ, մանրակրկիտ եւ երկար տարիների արդյունավոր աշխատանք, որը քննում է Արցախի թեման 19-րդ դարի հայ

գրապատմական իրադարձությունների ընդհանուր ծիրում եւ ներկայացնում է գրական լայն համապատկեր:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, վեց ծավալուն գլուխներից, եզրակացությունից, հավելվածներից եւ օգտագործված գրականության ցանկից: Միանգամից նշենք, որ հավելվածները սովորաբար չեն մտնում աշխատանքի բուն սահմանների մեջ (դեռ մի կողմ՝ դրանցում տեղ գտած նյութի «իրավունքը») եւ չեն էջակալվում:

Առաջին գլխի առաջին ենթագլուխը (ինքը նախընտրում է մաս կոչել) նվիրված է Պլատոն Ջուբովի գրքի՝ Բաֆֆու կատարած թարգմանությանը, երկրորդը՝ վերջինիս «Խամսայի մեկիբությունները» պատմագիտական աշխատանքին: Երկրորդ գլուխը միտված է Ապրես Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի» գրքի գրական արժեքի ճանաչումին: Այնուհետեւ գալիս է Մուրացանի երեք գործերի գիտական ներկայացման փորձը: Չորրորդ գլխում Արցախի թեման ընդգրկող ուղեգրական նոթերն են՝ Մեսրոպ Թադիադյան, Սարգիս Ջալալյան, Հայկունի: Հինգերորդում միախմբված են 19-րդ դարի արցախյան պատմագեղարվեստական երկերը (Ալիշան, Բարխուդարյան, Լեո): Վերջին գլուխը քննում է Տմբլաչի Խաչանի ֆելիետոնների՝ արցախցիների կյանքի գեղարվեստական պատկերները:

Աշխատանքում կուտակված է հսկայական նյութ, պատմական հարուստ տեղեկություններ, մի խոսքով՝ այն ամենը, ինչ նպաստում է Արցախ աշխարհի համապարփակ ճանաչողության կերպին, հոգեբանությանը, ինչը դոկտորանտին հնարավորություն պիտի տար ընդգծված հայտարարելու, թե քանի որ «թեմայի շրջանակները բավական լայն են», ուստի ինքը, «որպես խնդրի լուսաբանության առաջին փորձ», նախընտրել է «առանցքային այն հուշարձանները, որոնք առավել խորությամբ են ներկայացնում Արցախի գրականությունն ու պատմությունը, բնաաշխարհագրական պատկերը, ստեղծագործ ոգին» (էջ 4): Հեղինակի այս ընդգծումները ակամա դարձել են հավակնության նշաններ. արդյո՞ք այս ամենը խնդրի

լուսաբանման առաջին փորձն է: Արդյո՞ք հանրագիտարանային չէ բուն դոկտորական առաջադրությունը, ուր երկրորդականն ու գլխավորը կողք կողքի են քննված:

Աշխատանքն ինքնին ձգտում է ամբողջականության, եւ կարծում ենք, հարկ չկար դրականն ամրապնդելու համար դիմել, օրինակ, Ս. Սարինյանի հաստատագրումին, թե «պարզապես զարմացել է հսկայական այն աշխատանքից, որ կատարել է Ջ. Բալայանը «Ղարաբաղի աստղագետը» վեպի հետ առնչվուղ բոլոր հարցերի, փակագծերի ու պատմական հղումների բացահայտման ուղղությամբ» (էջ 53): Տողատակի հղումն էլ տրված է ոչ ամբողջական:

Ներածության մեջ, որը 22 էջ է զբաղեցնում, բանասիրական մանրակրտիտ ծանոթագրություններ կան 19-րդ դարասկզբին Ղարաբաղից Պարսկաստան գերեվարված Հարություն (Հովսեփ) Ներսիսյանի եւ Փարուխ Ամիրխանյանի կյանքի, գործունեության ոլորտների, Շուշիի հոգևոր թեմական դպրոցի հիմնադիր Բաղդասար Մետրոպոլիտ Հասան Ջալալյանի եւ հարակից հարցադրումների վերաբերյալ (Ավետիք Բահաթրյանի, հատկապես Շուշիի մշակութասեր կանանց՝ Մարգարիտ Ալեքսանյան, Սոֆյա Առաքելյան, Մարիամ Հախումյան, ծավալած բուռն գործունեություն, հայտնի եւ սակավ դեր խաղացած դեմքերի ուրվագծային մեկնություններ), որոնք շարադրանքում, այնուհանդերձ, կողմնակի նշանակություն ունեն, տրված են իբրեւ սոսկ փաստական արձանագրություններ:

Կարծում ենք, 15 էջ շարունակ վեց գլուխների վերաշարադրանքը ինքնանպատակ կրկնության վտանգ է բերում: Թերեւս ճիշտ կլինէր խոսել հարցի պատմության, գիտական մշակվածության մասին, որոնցից ատենախոսը հպանցիկ անդրադարձել է միայն ք. Կոստիկյանի «Ղարաբաղի 18-րդ դարի պատմությունը ըստ Միրզա Ներսեսուվի «Թարիխ-ե Սաֆի»ի» (Եր., 2001) գրքին: Մեր գիտարկումներից մեկն էլ վերաբերում է բաժինների խորագրմանը. այսպես, չորրորդ գլխի երկրորդ մասում Մարգիտ Արք. Ջալալյանցի գործը բնութագրվում է «որպես պետականությունը վերակերտելու ազգային ճանապարհ», վեցերորդ գլխի խորագիրը ծավալվում է չորս տողի վրա, դրա դիմաց, ասենք, Հայկունուն վերաբերող հատվածի ժլատ

ձեռակերպումն է: Մեկ այլ պարագայում շահարկված է «արցախյան անդրադարձներ» կապակցությունը, այն էլ՝ նույն գլխի ներսում:

Առաջին գլուխը խորագրված է «Բաֆֆի. թարգմանական եւ վիպապատմական անդրադարձներ»: Մեր տպավորությամբ՝ դա արվել է շահագրգռությամբ, որպեսզի արդարացվի Պլատոն Զուբովի «Ղարաբաղի աստղագետը» ռուսերեն շարադրված, Մոսկվայում 1834-ին տպված գիրքը իբրեւ հայ գրականության փաստ ճանաչելը: Այդ մասին մենք դեռ զգուշացրել ենք առաջին պաշտպանության ընթացքին: Ո՞րն է Բաֆֆու բերած պարզաբանման հիմնավորումը. «Այդ երկու աշխատությունները անմիջական կապ ունեն միմյանց հետ եւ լրացնում են մինը մյուսի թերությունները, մեկը որպես վեպ, մյուսը որպես պատմություն: Եվ այդ մտքով էլ մենք թարգմանեցինք «Ղարաբաղի աստղագետը», համարելով նրան իբրեւ մի օժանդակ կամ լրացուցիչ աղբյուր «Ռամսայի մելիքությունները» կոչված պատմության համար» (էջ 25), երբ մեծանուն գրողն ինքն էլ խոստովանում է, որ իր երկը «պատմություն» է:

Բացի դրանից՝ ռուսերեն շարադրանքի խորքում արձանագրվում է, թե իբր «Զուբովի արվեստի տիպաբանությանը ներհատուկ է հնագույն վիպերգերի շունչը» կամ «Վեպը շահում է նաեւ ժանրային առանձնահատկությամբ, տիպաբանական եռութենաբանությամբ (սուրստանցիայով), այուժետային մտահղացմամբ ու կառուցումներով, հետաքրքիր կոմպոզիցիոն զարգացումներով եւ այլն» (էջ 51):

Մեր կարծիքով, աշխատանքի այս հատվածը կարելի էր ընդգրկել հավելվածում:

Ինչ վերաբերում է երկրորդ գլխին, Ապրես Բեկնազարյանի «Գաղտնիք՝ Ղարաբաղի» գրքի առիթով գիտական խճողումների շուրջ Ջ. Բալայանը փորձել է կողմնորոշվել եւ կողմնորոշել Մակար Բարխուդարյանի աշխարհաբարի փոխադրության առիթն օգտագործելով, ինչը հաղթահարել չի կարողացել: Գիրքն առեղծված է մնում, այն, իր տեսողությամբ, 135 տարի լույսի է մատնվել, եւ հիմա է, որ ինքը ներկայացնում է վերագնահատության ու արդարացման, ինչպես «Ռուզան»-ի պարագային է (էջ 249), փորձելով հակադրվել Հր. Բեզլարյանից բերված «առյուծաբաշ» Բաֆֆու հալածանքներին (էջ 146) կամ Լեոյի ժխտման հիմքերին (էջ 145): Չմոռանանք, որ Լեոն

«Գաղտնիք Ղարաբաղի» աշխատության առիթով հանդես է եկել «Վեպ թե՞ պատմություն» հոդվածով, ուր եթե վիպական տարրն է ընդգծում, ապա առաջին հերթին՝ անհավանական հերոսների առկայությունը շեշտելու համար: Բ. Ուլուբաբյանն էլ, ըստ Հր. Բեզլարյանի, փորձել է Մ. Բարխուդարյանին փրկել Ռաֆֆու ճանկերից (ինչու՞ ոչ չակերտների մեջ, ո՞ր է ատենախոսի միջամտությունը): Ձայրույթի ու պաշտպանական կռվանները որո՞նք են, հարցերը այդպես էլ չեն մեկնաբանվում: Այսպես, Զ. Բալայանը վերացականորեն ծառանում է Հր. Բեզլարյանի սուր մերժումի դեմ՝ առանց խորանալու ճանաչողական հիմքերի մեջ. «Հարցի ընդհանուր դրվածքի վերաբերյալ (ո՞րն է դա՞ դոկտորանսը չի բացում) Հր. Բեզլարյանը (Հր. Բեզլարյանը եւ մյուսները չէին կարող ճիշտ պատասխանել անքննելի դարձած (այսի՞նքն) եւ մերժումի արժանացած «Գաղտնիք Ղարաբաղի»-ի առեղծվածին՝ հասկանալի պատճառներով, դա հարցի այլ կողմն է), գրում է. «Պետք է հիշել, որ Մ. Բարխուդարյանի «Գաղտնիք Ղարաբաղի» աշխատությունն այդպես էլ առեղծված մնաց բոլոր ժամանակների համար» (էջ 146):

Երբորդ՝ «Արցախը Մուրացանի գեղարվեստում» գլխում, Զ. Բալայանին հետաքրքրել է «Ռուզան»-ի առթիվ Ա. Տերտերյանի, Լեոյի եւ Մուրացանի գրական ինքնատիպ բանավեճը: Նա բարձրացնում է դարասկզբի հայտնի մշակների «եռակողմ» գրույցի հեռապատկերը, ուր ներառել է սիմվոլիզմի, ռոմանտիզմի եւ կլասիցիզմի շաղախ կազմած ուղղությունների «առատ տարրերը» (էջ 248), կնոջ նկարագրի հարազատության ընկալումը եւ տարբերիչ գծերի քննարկումը համանման վիճակներում Սորիս Մետերլինկի ու Մուրացանի պատմական հայեցակետերում, ուր տեսնում է միայն «հակադրույթ ստեղծելու եւ հակաճառման ելնելու» (նույն տեղում) գրողական քայլեր՝ գրական համայնքին համոզելու համար, որ Մուրացանի դրամայի երկու տարբերակներում Ռուզանի կերպարը առավել քան համոզիչ է: Դոկտորանսը դիտարկում է բելգիական եւ հայ դիպաշարերի ընդհանրացումը, որ հաստատի գաղափարական փոխկանչի արդարացումը, առաջինը՝ սոցիալական, երկրորդը՝ քաղաքական, իր բառով՝ ազատական հենքով (էջ 249): Նպատակը ինքնատիպ է,

գործնական կազմել վերլուծական նոր հատակագիծ «Ռուզան»-ի համար: Բայց Մետերլինկի «Մոննա Վաննա»-ն քսան տարի ուշ է գրվել: Այդ դեպքում լավ կլիներ, որ ատենախոսը չշրջանցեր Սերգեյ Սարինյանի և ուրիշ գիտնականների տեսակետները այս ուղղությամբ, ինչն ավելի կհարստացներ աշխատանքի գիտական կողմը:

Հաջողված են թվում գրական հերոսների մեջ գաղափարատիպերի ենթաբաժանման կառուցողական մուրացանյան միտումի էլակետերը՝ մեկ բնագանցականի, մեկ եսակենտրոնի և հաճախ՝ անձնուրացի մատուցման խնդրառության խմբավորումների թելադրությամբ: Դա, իհարկե, բերում է կարծրատիպերի ճանաչման գայթակղություն, բայց դա միտումի կիրառման տարածված հատկանիշն է: Մուրացանը խուսանավել չէր կարող: Եթե նժարին հայրենիքի բարձրագույն սիրույն գոհաբերումն է, դրան պիտի ստորադասվեն մյուս զգացումները, անգամ ամուսնական բանաստեղծական ապրումի և հարակից հոգեկան տառապանքի թելադրանքները, քանի որ ըստ արձակագրի՝ հերոսը կատարելատիպ է կյանքի բոլոր դրվագներում: Խորհուրդով է արժևորվում կյանքին բարձր ծառայությունը, ոչ թե խորհրդավորությամբ, ինչպես պատգամել է Գարեգինը՝ Աննայի սիրած անձնավորությունը: Մենք նկատի ունենք խորհուրդ և խորհրդավորություն բառերի մուրացանյան տարբերակումը, մինչդեռ «Էվելինա»-ի հեղինակ Գրիգոր Արծրունու բարոյագետ դրույթները ավելի ուշ են հրապարակ իջել և առաջնային լինել չէին կարող, այս անգամ արդարամտորեն վկայում է Չ. Բալայանը: Բայց վերջինս չի ուզում նկատել Աննայի գործողություններում հոետորարանության ուղղաձիգ կնիք-հետագիծը, ճիշտ ինչպես Ռուզանի պարագային, ինչից հաջողությամբ հեռացել են այլ ռոմանտիկ հեղինակներ: Նվաճում է դիտում հերոսուհու դիրքորոշումը, որով հիացումը վերաճել է նկարագրական վերաշարադրման նոր փորձի. «Միանձնուհու մեծագույն սիրո առիավատյանս սո Գարեգին նրա բարձրարվեստ ու գաղափարապես հարուստ անձնագոհության վկայությունն է, որը պարզապես հրաշագործության է նման» (էջ 259): Դրանից Մուրացանը դառնում է «նուր ու քանքարաշատ գեղագետ» (նույն տեղում), «մեծ գեղագետ, նաև մեծ հոգեկան, մեծ գեղեցկապաշտ, անշուշտ նրա հոգուն և մտքերին հաճո էր ու անչափ սիրելի բոլոր

Աննայի արտասովոր էության կանացի գուսպ, բայց բարձրակարգ խառնվածքային գծերից դեպի իրեն հազար թելերով ձգող լինելության խորհուրդը քննելը» (էջ 261):

Տեսական դիտարկումներից հարկ է գրանցել կենսագրական մեթոդի եւ կենսագրական ժանրի շփոթի փաստը ու դրանից բխող հետետությունը, թե իբր «կենսագրական մեթոդը, արդի հայ գրականագիտության վերլուծական մեթոդների առաջատարներից է համարվում» (էջ 226): Եվ այդ շփոթը գալիս է դեռ ենթագլխի սկզբից, երբ Սենտ-Բյովի սկզբունքի անհարկի մանրամասներով փորձ է արվում ճշտել Մուրացանի՝ Բաղդասար Մետրոպոլիտի համառոտ կենսագրության շարադրանքի առանձնահատկությունները, դրան ավելացրած Հ. Շահնագարյանի, Ն. Տեր-Կարապետյանի, Ա. Երիցյանի եւ այլոց համանման ստեղծագործությունների թվարկումները:

Չորրորդ գլխում լավ է նկատված Սարգիս Ջալալյանցի «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» աշխատության առիթով գեղարվեստական տարրի առկայությունը (էջ 293): Կուզենայինք իրականի ու գեղարվեստականի այսօրինակ համադրական մոտեցումը ավելի խորացված եւ բնութագրական տեսնել ողջ աշխատանքի համար:

Աշխատանքի առավելություններից պիտի դիտել հինգերորդ գլխի երրորդ մասը, որը նվիրված է Լեոյի «Մելիքի աղջիկը» պատմավեպի քննությանը: Սա նաեւ այն պատճառով, որ դիմանում է ատենախոսության խորագրային պահանջին, եւ որին ատենախոսը նվիրել է շուրջ 90 էջ՝ մանրամասն անդրադառնալով կերպարային համակարգին: Այդպես արդարացված են աշխատանքի մեջ Մուրացանի երկու գեղարվեստական՝ «Ռուզան» եւ «Խորհրդավոր միանձնուհի» երկերի մուտքերը, ինչպես նաեւ վերջին՝ վեցերորդ գլխում Տմբլաչի Խաչանի ֆելիետոնների վերլուծական բաժինները:

Կարծում ենք, կառուցվածքային տեսանկյունից աշխատանքը կշահեր, եթե համախմբվեին երկրորդ գլուխն ու չորրորդ գլխի երրորդ ենթագլուխը, քանի որ Հայկունու երկը մեծ մասով նվիրված է «Գաղտնիք Ղարաբաղի» գրքին: Այդ դեպքում երկու անգամ նույն նյութին անդրադարձը կբացառվեր (էջեր 120-148 եւ 306-318):

Բերենք ընդհանրական կարգի մի քանի նկատառումներ: Այսպես, աշխատանքում տեղ են գտել զգացական մեկնություններ, նկարագրականություն, վերապիտանքի անհարկի կուտակումներ, պատկերային կարգի բնութագրումներ: Աշենք ետևեյալ օրինակը, ուր ատենախոսը անդրադառնում է Բաղդասար Մետրոպոլիտի գրեթե Բանաստեղծական շնչով. «Ու այդ հսկայածավալ գործունեությունը բազմափաստակ, բազմաչարչար, բազմաքանքար, եռանդուն հոգեւոր, մշակութային, քաղաքական գործիչին մոտեցրեց իր երկրային, բայց ոչ երկնային վախճանին, այն է՝ 1854 թ. հունիսի 27-ը» (էջ 224): Եվ թվագրումն էլ, չգիտես ինչու, թավ նիշերով: Կամ մեկ էջ ներքև հիշատակում է նրա վարքը՝ գրելով, թե «Բաղդասար Մետրոպոլիտի վարքը Մ. Մաշտոցի ծավալած, ազգային գաղափարախոսությունից ելնող բազմաբեղուն գործունեությունը, որի պտուղները բերրի, հասուն ցորենի արտ էին հիշեցնում, հայ ժողովրդի կյանքի համար՝ բարեբեր դաշտ՝ անվանյալ ոսկեդար» (էջ 225-226):

Այսպիսի հատվածները աշխատանքում շատ են եւ անհարկի ծավալ են ավելացնում, ինչպես մեկ այլ տեղում՝ «պետականագուրկ, սահմանագուրկ, շնորհագուրկ, աստանդական դարձած» կապակցությունը (էջ 292): Մյուս դեպքերում բավարարվենք միայն էջերի թվարկումներով (286, 287, 317, 355 եւ այլն): Կան սխալ բառագործածության դեպքեր, օրինակ՝ «հոգեւոր արքեպիսկոպոսի աստիճան» (էջ 288), «այդ ամբողջի տեսլականի հաստատումը՝ իրական կատեգորիայում» (էջ 298), «կրթած» (էջ 356 եւ 371), «հուսացում» (էջ 358), «որպիսիներ» (էջ 373), ուղղագրական վրեպներ՝ «ընդհարձակել» (էջ 288), «ութսունիներորդ», «հարյուրվացսունվեցր» (էջ 320), գրեթե էջի հասնող մեջբերումներ (էջ 297, 304-305), փաստական նյութի կրկնություն (էջեր 308 եւ 311): Ինչ ասել է «1, 2 բնութադրությամբ, որից նույնպես կառչել են» (էջ 306):

Մեզ համոզիչ չի թվում Ղարաբաղ հատուկ անվան բացատրությունը Ալիշանի առիթով, որը տրվում է իբրև «մեծ բաղ» հենվելով դարա-կարա-կոյունկու եւ ակ-կոյունկու ցեղախմբերի բացատրության վրա, երբ Ալիշանի բնագրում «Ղարաբաղ է կոչվում՝ անտառների, ազարակների, սյգիների եւ նրանց սավերների պատճառով» (էջ 325), ինչն ինքնին «սավերների» օգնությամբ հուշում է «սև» իմաստը:



Ատենախոսության մեկ այլ հատվածում, արդեն օգտվելով Մակար Բարխուդարյանի հաստատումներից, Ղարաբաղի դիմաց բերում է «Մեւ այգին» (էջ 346): Ի դեպ, Մակար Բարխուդարյանի «Արցախ» երկին, ի շարս այլ ձեւակերպումների, տրվում է «գրականագիտական... բացառիկ բարձր արժեք» ոչ այնքան բնութագրական գնահատականը (էջ 351):

Հեղինակային ընդգծումներով են ներկայացվում սեփական շարադրանքի բազմաթիվ հատվածներ, որոնք, ըստ էության, դեր չեն խաղում ասելիքը կարելուրելու առումով:

Ամփոփումների մեջ կարծիքը միանշանակ է՝ Ջ. Բալայանը փորձել է ընդգրկել անընդգրկելին՝ հայ գրականություն եզրի տակ գետեղել ողջ արցախապատումը՝ կարելուր չէ ուղեգնացություն, պատմություն, աշխարհագրական վերաբերմունք թե՛ ոուսերեն գրվածքներ: Միաժամանակ նկատենք, որ ի տարբերություն առաջին պաշտպանական փորձի՝ գեղարվեստական գործերի ներառումը սովորացել է եւ ավելի առարկայական դարձել: Դրականը, եւ խիստ դրականը, արցախապատումի համապատկերի ջանքն է, որ արված է սիրով ու նվիրումով: Անցյալի արժեւորումը 19-րդ դարի մեր հիշողության արթնացումը եւ պատմաքաղաքական ճշմարտության ամրագրումն է:


ՈՐՈՇԵՑԻՆ՝ Զինախոս Վանիի Բալայանի «Արցախը XIX դարի հայ գրականության մեջ» թեմայով դոկտորական ատենախոսությունը երկարատեւ համադրական աշխատանքի արդյունք է, համապատասխանում է ՀՀ ԿԳՄՍՆ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի պահանջներին եւ կարելի է ներկայացնել հրապարակային պաշտպանության:



ՍՈՒՐԵՆ ԴԱՎԹԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ  
Վ. ՊԱՐՏԻԶՈՒՆՈՒ ԱՆՎ. ՀԱՅ ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԵՎ ՆԳԱ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Հաստատում եմ պրոֆ. Ս. Դ. Դանիելյանի կարողացածը:



  
ՄԱՐԻԱՄ ՄԿՐՏՉԻ ԻՍՊԻՐՅԱՆ  
ԽՈՒՄԵՆԻ ԱՆՎԵՐԱՆԻ ՀՊՄՇ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ